ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2023 ԹՎԱԿԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարանի առաջնային և կարևոր խնդիրներից է համարվում սոցիալական ոլորտը: Համայնքապետարանի կողմից սոցիալապես անապահով ընտանիքների համար սոցիալական ծառայությունների հասանելիության և մատչելիության վերաբերյալ գործունեության տարբեր ծրագրի շրջանակներում վեր հանված հիմնախնդիրները նպատակ ունեն բարելավել ընդհանուր գործընթացը և սոցիալական աջակցության քաղաքականության վերաբերյալ առաջարկներ մշակել: Սոցիալապես անապահով և խոցելի ընտանիքների օրինական շահերի և իրավունքների պաշտպանության գործընթացը պետք է իրականացնել սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական տրամադրման ընդգրկուն գործողությունների լայն շրջանակի ապահովման միջոցով: Համայնքապետարանը սոցիալական ծրագրերի մի շարք տարբեր որդեգրած սկզբունքներով է առաջնորդվում, այն է՝

1) սոցիալական աջակցության անհրաժեշտություն առաջացնող գործոնների, դրանց փոխկապակցվածության և պատճառահետևանքային կապերի բացահայտումը, բացասական ազդեցության չեզոքացումը,

2) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կամ ընտանիքի օրինական շահերի պաշտպանությունը և նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը,

3) սոցիալական ծառայությունների մատչելիության և կողմնորոշման բարձրացումը դեպի սոցիալական աջակցություն ստացողները, դրանց որակի բարելավումը, սոցիալական համախմբվածության ամրապնդումը՝ խոցելի խմբերի սոցիալական մեկուսացվածությունը նվազեցնելով,

4) ռեսուրսների արդյունավետ ներգրավմամբ և օգտագործմամբ սոցիալական ծառայությունների տրամադրումը,

5) արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև անհետաձգելի լուծում պահանջող՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող,կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական

աջակցություն ստացողի խնդիրներին արագ արձագանքման, ինչպես նաև սոցիալական ծառայությունների անհապաղ տրամադրման հնարավորությունների ստեղծումը,

6) աղքատ, սոցիալապես անապահով, ինչպես նաև մեկուսացված խմբերի տնտեսական և սոցիալական խոցելիության նվազեցումը,

7) սոցիալական ոլորտում սոցիալական աշխատանքի դերի ու նշանակության բարձրացումը, վստահության մթնոլորտի ձևավորումը:

Առաջնորդվելով սոցիալական խնդիրների լուծման ու կարգավորման սկզբունքներով տարեսկզբին մեկնարկած սոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում Վաղարշապատ համայնքի /Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի/ սոցիալական ֆոնդից դեկտեմբերի 30-ի դրությամբ ֆինանսական աջակցություն է տրամադրվել 320 ընտանիքի, առավելապես առողջապահական նկատառումներով տրամադրվել է օգնություն՝ թվով 147 քաղաքացու, սոցիալապես խոցելի ընտանիքներին՝ 168 ընտանիքի, ինչպես նաև աջակցություն է տրամադրվել թվով 5 ուսանողի:

Սոցիալական աջակցության ոլորտում ներառված են նաև

- Նպաստառուները
- Թոշակառուները
- Միայնակ տարեց քաղաքացիները
- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Բազմազավակ ընտանիքները
- Արցախյան պատերազմներում զոհված, վիրավորում ստացած կամ անհետ կորած ընտանիքները:

Վաղարշապատի համայնքապետարանի և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաթիվ ընտանիքների հատկացվել է նյութական աջակցություն՝ սնունդ, հիգիենայի պարագաներ և հագուստ:

- «Հանուն ժողովրդի բարեկեցության» մարդասիրական և տնտեսական զարգացման ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում Ոսկեհատ բնակավայրում սոցիալապես խոցելի 10 ընտանիքների հատկացվել է սնունդ և հիգիենայի պարագաներ, իսկ Էջմիածին քաղաքում սոցիալապես անապահով և բազմազավակ 13 ընտանիքների հատկացվել է սնունդ, հիգիենայի պարագաներ և հագուստ:

Ցավոք մեր հասարակությունում շատ են հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք կարիք ունեն մշտական ուշադրության և հոգածության: Հետևաբար մեր հատուկ ուշադրությունը և վերաբերմունքը կա հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամության և հատուկ խնդիրներ ունեցող 24 երեխաների հատկացվել է պայուսակներ և հագուստ:

Կրթության և գիտության օրվան ընդառաջ Էջմիածին քաղաքում և Ոսկեհատ բնակավայրում առաջին դասարանի թվով 29 բազմազավակ ընտանիքների երեխաներին հատկացվել է դպրոցական պայուսակներ:

- «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցության արդյունքում Ոսկեհատ բնակավայրում սոցիալապես խոցելի, անապահով, բազմազավակ թվով 66 ընտանիքներին հատկացվել են հագուստ:

Համայնքների խոշորացումից հետո Վաղարշապատի համայնքապետարանի մշտական և առաջնային ուշադրության կենտրոնում է Ոսկեհատ բնակավայրը, հատկապես միջնակարգ դպրոցը և Ոսկեհատի թիվ 10 մանկապարտեզը:

Շարունակելով համագործակցությունը «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության հետ Ոսկեհատ բնակավայրի միջնակարգ դպրոցի աշակերտներին հատկացվել է հագուստներ, մասնավորապես՝

1-ին դասարան՝ 16 տղա, 16 աղջիկ

3-րդ դասարան՝ 14 տղա

4-րդ դասարան՝ 16 տղա

5-րդ դասարան՝ 12 աղջիկ, 15 տղա

6-րդ դասարան՝ 17 տղա, 11 աղջիկ

7-րդ դասարան՝ 11 տղա, 8 աղջիկ

8-րդ դասարան՝ 12 տղա

9-րդ դասարան՝ 12 տղա

10-րդ դասարան՝ 13 տղա

Ընդհանուր թվով՝ 173 աշակերտների, իսկ Ոսկեհատի բնակավայրի թիվ 10 «Ոսկեհատ» մանկապարտեզի թվով 30 սաներին հատկացվել է հագուստ:

Էջմիածին քաղաքում սոցիալապես անապահով, բազմազավակ, Արցախից տեղահանված՝ թվով 71 ընտանիքների հատկացվել է հագուստ:

Միայնակ, տարեց և անկողնային հիվանդ թվով 11 տարեց քաղաքացիներին հատկացվել է հիգիենայի պարագաներ և տակդիրներ:

- «Հայկական Կարմիր խաչ» ընկերության հետ համագործակցության արդյունքում Էջմիածին քաղաքի սոցիալապես անապահով տարեց միայնակ թվով 20 քաղաքացիների հատկացվել է սնունդ և հիգիենայի պարագաներ: Սոցիալապես անապահով բազմազավակ թվով 30 ընտանիքներին հատկացվել է հագուստ:

2023 թվականին միայնակ տարեց՝ թվով 12 քաղաքացիների 6 ամիս անընդմեջ շարունակ հատկացվել է սնունդ և հիգիենայի պարագաներ: Համագործակցության ծրագիրը 2023 թվականի դեկտեմբերի 1-ից 6 ամիս անընդմեջ շարունակ կրկին գործելու է:

Սոցիալապես անապահով և բազմազավակ թվով 30 ընտանիքների հատկացվել է մեծ քանակությամբ հագուստ:

- Հոլանդահայ բարերարի կողմից Էջմիածին քաղաքում բազմազավակ սոցիալապես անապահով թվով 8 ընտանիքներին հատկացվել է մեծ քանակությամբ սնունդ, իսկ Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերում սոցիալապես անապահով բազմազավակ թվով 31 ընտանիքների հատկացվել է հագուստ:
- Աղքատության հաղթահարումը և մարդկանց ինքնաբավ գործառնումը սոցիալական աշխատողների մշտական ուշադրության ներքո են: Հետևաբար «Հանուն ժողովրդի բարեկեցության» մարդասիրական և տնտեսական զարգացման ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում միայնակ, սոցիալապես անապահով, նպաստառու 2 միայնակ կանանց տրամադրվել են մասնագիտական գործիքներ, մասնավորապես՝ մատնահարդարման և վարսահարդարման գործիքներ, որպեսզի հաղթահարեն աղքատության շեմը և բարելավեն ընտանեկան սոցիալական վիճակը:
- Հարկ է նշել, որ սոցիալական աշխատողները հասարակության խիղճն են: Այս մասնագետները «դեմքով կանգնած են դեպի մարդկանց» և օգնում են լուծել իրենց կյանքում առաջ եկած խնդիրներ: Ցավոք մեր հասարակությունում շատ են հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք կարիք ունեն մշտական ուշադրության և հոգածության: Հետևաբար, մեր հատուկ ուշադրությունը և վերաբերմունքը կա

հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար կազմակերպվել է ուղղագնացություն Տավուշի մարզ, Հաղարծին, Գոշավանք, Պարզ լիճ և Մակարավանք:Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում են հաշմանդամություն ունեցող երեխաները և տարեցները: Հետևաբար, «Հանուն ժողովրդի բարեկեցության» մարդասիրական և տնտեսական զարգացման ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում բազմազավակ ընտանիքի հաշմանդամություն ունեցող երեխային հատկացրել ենք շարժասայլակ, իսկ՝ «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից երկու տարեցների հատկացվել է քայլասայլակներ:

- Վաղարշապատի համայնքապետարանը լայն համագործակցություն ունի հատկապես սոցիալական ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ, հատկապես պրոդուկտիվ գործընկերային համագործակցություն ունենք «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության հետ՝ Արցախից տեղահանված բնակիչների սոցիալական կարիքների և սոցիալական ինտեգրման հարցերի շուրջ:
- Սոցիալապես անապահով ընտանիքների կարիքների և սոցիալական ռիսկայնության գնահատման հետ կապված հարցերի շուրջ համագործակցություն ունենք «Սոցիալական աշխատողներ ասոցացիա» հասարակական կազմակերպության հետ:
- Արցախյան պատերազմների մասնակից, վիավորում ստացած և զոհվածների ընտանիքներին սոցիալական աջակցության և սոցիալական ծրագրերի ներդրման և ինտեգրման հարցերի շուրջ լայն համագործակցություն ունենք «Վորլդ Վիժն» հասարակական կազմակերպության հետ:
- Աղքատության հաղթահարումը և մարդկանց ինքնաբավ գործառնումը սոցիալական ոլորտում Վաղարշապատի համայնքապետարանի կողմից որդեգրված առաջնահերթություններից է: Այն ենթադրում է աղքատությունից տուժող ընտանիքներին դրամական աջակցության և ածանցյալ սոցիալական երաշխիքների տրամադրումից անցում դեպի ակտիվ ծրագրերի, որոնք թույլ կտան երաշխավորել մարդկանց ինքնաբավ գործառնումը: Աղքատության հաղթահարումը ենթադրում է ոչ միայն նյութական վիճակի բարելավում. Այն ներառում է ընկալումների և դիրքորոշումների, սեփական ուժերի հանդեպ

վերաբերմունքի աստիճանական և կայուն փոփոխություն: Հետևաբար աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերը ի լրումն դրամական բնույթի ներարկումների, ենթադրում են մոտիվացիայի խթանում, հմտությունների զարգացում, փորձարկումների հնարավորության տրամադրում, անքննադատ աջակցող վերաբերմունք, սեփական ներուժի բացահայտման հնարավորություն, մարդկային էներգիայի և հույսի փոխանցում: Այս ամենի բանալին սոցիալական աշխատանքն է՝ իրեն յուրահատուկ մեթոդներով և մոտեցումներով:

Հետևաբար «հաղթահարելով աղքատությունը» կարգախոսի շրջանակներում և համագործակցելով «Մանկական զարգացման հիմնադրամ» հասարակական կազմակերպության հետ համայքնում ընտրվել են սոցիալապես անապահով, նպաստառու, ընտանիքի կերակրողին կորցրած և Արցախից տեղահանված թվով 4 շահառու կանայք, որոնք 3 ամիս շարունակ անցել են մասնագիտական անվճար դասընթացներ, ծրագրի շրջանակներում ձեռք են բերել հրուշակագործության և մատնահարդարման մասնագիտությունների վերաբերյալ անհրաժեշտ հմտություններ ու գիտելիքներ: Ավարտից հետո ստացել են մասնագիտական գործիքներ, որոնք միտված են խթան հանդիսանալու՝ ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակի մակարդակը բարձրացնելու և աղքատության հաղթահարմանը, ընտանիքի սոցիալական կենսամակարդակի բարձրացմանը: Նման համագործակցությունը ենթադրում է շարունակական բնույթ:

- Ապրիլի 7-ին՝ մայրության տոնին, սոցիալական բաժնի աշխատակիցները այցելել են Վաղարշապատի ԲԿ-ի ծննդատուն՝ մայրության բերկրանքը վայելած մայրերին շնորհավորելու և նորածին բալիկներին նվերներ հանձնելու:
- 2023թվականի հուլիս ամսին Վաղարշապատի համայնքապետարան են դիմել քաղաքացիներ, ովքեր էջմիածին քաղաքում հայտնաբերել էին օտարերկրյա քաղաքացու՝ անօթևան և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված: Սոցիալական աշխատողները ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ, անցկացրել ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ տվյալ անձը Ուզբեկստանի Հանրապետության քաղաքացի է, բնակվելով Ռուսաստանի Դաշնությունում և փաստացի գրանցում չունենալու պատճառով ստացել է արգելք Ռուսաստանի Դաշնությունում բնակվելու համար, ինչի հետևանքով հայտնվել է Հայաստանի Հանրապետությունում և անհնար է եղել հետ վերադարձը

Ռուսաստանի Դաշնություն: Անմիջապես ձեռնարկվել է միջամտություն՝ Մեր Տունը ՀԿ-ում ժամանակավոր կացարանով ապահովելու հարցով: Սոցիալական աշխատողները դիմել են համապատասխան պետական մարմին՝ ստանալով ժամանակավոր փախստականի կարգավիճակ, որից հետո որոշ ժամանակ անց համայնքապետարանի և բարի մարդկանց անմիջական ջանքերի միջոցով կազմակերպվել է նշված քաղաքացու ետ վերադարձը հայրենիք՝ Ուզբեկստանի Հանրապետություն:

- Մայր Աթոռի հետ համագործակցության արդյունքում Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի 24 անձ և 11 ընտանիք օգտվում են Մայր Աթոռի բարեգործական ճաշարանից:
- Տարին հեշտ չէր, նույնիսկ կարելի է ասել, որ շատ բարդ ու ծանր էր, հատկապես Արցախից տեղահանված և Արցախյան պատերազմների բոհով անցած երեխաների համար: Մեր հույսն ու ուրախ ակնթարթները կապված են երեխաների հետ, ովքեր ոչ մի դեպքում չպետք է շարունակեն մեր տխուր ապրումները և պետք է զինվեն ապագայի հանդեպ միայն լավատեսությամբ և մանկական լույսով:Հետևաբար «Հանուն ժողովրդի բարեկեցության» մարդասիրական և տնտեսական զարգացման ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում մանուկներին ուրախություն և ժպիտներ պարգևելու համար Ամանորյա և Սուրբ ծննդյան տոներին ընդառաջ Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի սոցիալապես անապահով ընտանիքների թվով 40 երեխաների տրամադրվել է ամանորյա նվերներ, իսկ Էջմիածնաբնակ բարերարի կողմից սոցիալապես անապահով, բազմազավակ, Արցախից տեղահանված թվով 160 երեխաների տրամադրվել է ամանորյա նվերներ:

Մեկ տարվա ընթացքում կրկնակի մոնիթորինգ և այցելություններ են կատարվել սոցիալապես խոցելի, անապահով, արցախյան պատերազմների տուժած, վիրավորում ստացած, զոհված և տեղահանված ընտանիքներ: Սոցիալապես անապահով ընտանիքներն այսօր բաժանվում են երկու խմբի՝ ընտանիքներ, որոնք մինչև պատերազմն էլ ունեցել են սոցիալական խնդիրներ, և ընտանիքներ, որոնք պատերազմի հետևանքով են կորցրել ընտանիքի միակ կերակրողին: Առաջինների համար սոցիալական միջոցների բացակայությունը մի կերպ տանելի է: Երկրորդ խմբին պատկանող ընտանիքներում սոցիալական խնդիրներին գումարվում է նաև հոգեբանականը՝ մինչև պատերազմը հայրական հոգատարությունը վայելած երեխաների համար ավելի դժվար է: Այցելություններ է կատարվել

նաև հաշմանդամություն ունեցող անձանց: Այս ընտանիքներին ցուցաբերվել է բարոյահոգեբանական և սոցիալ-հոգեբանական աջակցություն, ինչպես նաև հոգեբանական և ֆիզիկական բռնության ենթարկված կանանց և երեխաներին տրամադրվել է համապատասխան աջակցություն: Անօթևան մնացած մեկ քաղաքացու համար արագ արձագանքման և օպերատիվ աշխատանքի շնորհիվ լուծվել է բնակության վայրի կարգավորման հարցը:

Սոցիալական աշխատողը և սոցիալական աշխատանքը համայնքի սիրտն է, որն աջակցում և կանխարգելում է կյանքի դժվարին իրավիճակը և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին այդ վիճակից դուրս բերելուն: Խթանում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացումը: Սոցիալական աշխատողը ստեղծում է պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին ներառումը հասարակությանն ապահովելու համար, օժանդակել նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Վաղարշապատի համայնքապետարանի Քարտուղարության բաժինն իրականացնում է գրեթե բոլոր այն ծառայությունները, որոնք տրամադրվում են քաղաքացուն՝ համայնքապետարան այցելելու դեպքում:Նման ծառայությունների թվին են պատկանում քաղաքացիների դիմումների ընդունումը, տարաբնույթ տեղեկանքների տրամադրումը, համայնքի ղեկավարի և ավագանու մոտ ընդունելության գրանցումը, վարձակալական վճարների և գույքային հարկերի /շինության և հողի հարկի, փոխադրամիջոցների, գյուղ. նշանակության հողի հարկի/ տեղեկանքների տրամադրումը, քաղաքացիներին և իրավաբանական անձանց արխիվային տեղեկանքների տրամադրումը /շնչերի վերաբերյալ, աշխատած ժամանակահատվածի և աշխատավարձի վերաբերյալ/ և տարբեր բնույթի տեղեկանքների տրամադրումը /միջնորդագրեր, փողոցի վերանվանման տեղեկանքներ/ ՄՄԾ ներկայացնելու տեղեկանքներ:

2023 թվականին համայնքապետարան են ստացվել քաղաքացիներից դիմումներ՝ թվով 4097 և գրություններ տարբեր կազմակերպություններից՝ 3568:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության են մասնակցել թվով 527 բնակիչ:

2022 թվականի հունիսի 15-ից Վաղարշապատի համայնքապետարանում փոստային ծառայության հետ կապված առաքումները արդյունավետ և արագ իրականացնելու համար գործարկվել է ''ԷՆՎԵԼՈՓ'' համակարգը՝ որը հնարավորություն է տալիս խնայելու ժամանակը, կենտրոնացված կերպով կառավարել գործընթացները, թվայնացնել և ավտոմատացնել փոստ ուղարկվող առաքանու տվյալների փոխանցման գործընթացը: 2023թվականին ''ԷՆՎԵԼՈՓ'' համակարգի միջոցով առաքվել է մոտավորապես 1700 առաքանի:

2023 թվականից <<Հայաստանի ազգային արխիվ>> ՊՈԱԿ-ի հետ կնքվել է պայմանագրի կնքում՝ արխիվացման ենթակա փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանության և օգտագործման, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ոչնչացման գործընթացի պատշաճ ապահովման հետ կապված:

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

- Գ. Լուսավորիչ փողոցի անցումներում անցկացվել է ոռագման ցանցի խողովակ՝ 255 000 դրամ
- Քաղաքի փողոցների և ջրավազանների մաքրման համար ծեռք են բերվել համապատասխան ապրանքներ՝ 212 000 դրամ:
- Բարեկարգվել է Վ.Սարգսյան փողոցի անանցանելի տարածքը՝ 225 000 դրամ:
- Սեզոնային աշխատանքների կազմակերպման համար ծեռք են բերվել համապատասխան նյութեր՝ 938 500 դրամ:
- Քաղաքի այգիներում և կանգառներում տեղադրվել են ծխելը և շների մուտք արգելող նշաններ՝ 169 200 դրամ:
- Զվարթնոցի այգու տարածքում կատարվել է սալիկապատում՝ 858 000 դրամ:

- Կոմիտասի հրապարակի օղակաձև սիզամարգում անկացվել է կաթիլային համակարգ՝ 48.000 դրամ:
- Ա. Մանուկյան թաղամասի ջրահեռացման վնասված պ/է խողովակները փոխարինվել են մետաղյա խողովակներով՝ 155 000 դրամ:
- Նորոգվել է Բաղրամյան փողոցի 22 և 24 շենքերի միջև գտնվող խաղահրապարակի ցանկապատը՝ 410 000 դրամ:
- Տերյանի այգում անցկացվել է ոռոգման ջրագիծ՝ 1 315 800 դրամ:
- Նորոգվել է Տիգրան Մեծ-Բաղրամյան փողոցների խաչմերուկի լուսաֆորները՝ 173 000 դրամ:
- Վերանորոգվել է Կոմիտաս փողոցի խորքային հորի վթարված պոմպը՝ 540 000 դրամ:
- Քաղաքի սիզամարգերում և ծաղկանոցներում սածիլվել են ծաղիկներ՝ 832 700 դրամ:
- Ռուս-պարսկական պատերազմի զոհերի հուշարձանի /Մատուռ/ տարածքում տնկվել են տուա տեսակի ծառեր՝ 63 000 դրամ:
- Կոմիտասի հրապարակի Կոմիտասի արձանի դիմացի հատվածում փռվել է արհեստական խոտածածկ՝ 127 400 դրամ:
- Կատարվել է թափառող շների ստերջացում՝ 960 000 դրամ:
- Կատարվել է քաղաքի փողոցների և շենքերի բակերի ասֆալտբետոնե ծածկույթի փոսային վերանորոգումներ՝ 20 670 360 դրամ
- Վերանորոգվել է Պռոշյան, Ռիսուբ Բեկ Թեմուրյանց և Չարենց փողոցների խորքային հորերի վթարված պոմպերը՝ 970 000 դրամ:
- Քաղաքի գիշերային լուսավորության համար ձեռք են բերվել լեդ լուսատուներ՝ 1 828 224 դրամ և հենասյուներ՝ 748 500 դրամ:
- Քաղաքի այգիներում և պուրակներում կատարվել է լողավազանների հիգենիկ մաքրություն և ծառերի և բույսերի բուժում թունաքիմիկատներով՝ 907 200 դրամ:
- Տերյան փողոցի կոյուղու պոմպի շահագործման համար անցկացվել է էլ. հոսանք՝ 165 000 դրամ:
- Քաղաքի երթևեկի համար ձեռք են բերվել ճանապարհային նշաններ՝ 3 308 960 դրամ
- Կատարվել է փողոցների գծանշում՝ 7 416 000 դրամ:
- Ձ.Անդրանիկի թաղամասում գործող միջին ճնշման ստորգետնյա գազատարի վերատեղադրման աշխատանքներ՝ 870 000 դրամ:
- Ոսկեհատ վարչական շրջանի քանդված դիտահորերը փոխարինվել են նորերով՝ 900 000 դրամ:

- Էջմիածին – Ոսկեհատ կամրջին կից ճանապարհը հարթեցվել է՝ 363 000 դրամ:
- Քաղաքում տեղադրվել են նստարաններ՝ 930 000 դրամ:
- Տնօրինության համար ձեռք է բերվել համակարգիչ և տպիչ՝ 350 000 դրամ:
- Ձեռք է բերվել «էջմիածին» անվանումով դրոշներ՝ 769 5000 դրամ:
- Վերանորոգվել է Իսակով փողոցի ոռոգման համակարգի խողովակը՝ 234 000. դրամ:
- Կազմակերպվել է խորհրդանշական ծառատունկ Բեթղեհեմ քույր քաղաքի քաղաքապետի մասնակցությամբ՝ 130 000 դրամ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1.Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ բնակավայրի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները 185 բազմաբնակարան շենքերից կատարվել են ամեն օր, իսկ 148 անուն փողոցներից՝ օր ու մեջ հաջորդականությամբ:

2. Օրը 2 անգամ կատարվել է քաղաքի տարբեր տեղամասերում տեղադրված 216 հատ մեծ և 257 հատ փոքր մետաղյա աղբարկղների դատարկման և աղբավայր տեղափոխ ման աշխատանքները:

Վարչության մեքենա-տրակտորային պարկը ներառում է հետևյալ տրանսպորտային միջոցները՝

1) Զիլ-130 ինքնաթափ 8 հատ
2) ZIL KO-449 10 աղբատար 1 հատ
3) Գազ-53 ԿՕ 430 4 հատ
4) Զիլ- 130 ջրցան 2 հատ
5) ԿԱՄԱԶ ԿՈ 318 1 հատ
6) JCB-3CX էքսկավատոր 1 հատ
7) ԴԶ Т-170 բուլդոզեր 1 հատ
8) ԳԱԶ-3102 1 հատ
9) UAZ Բեռնատար /ֆուրգուն/ 1 հատ
10)VAZ 21214թեթև մարդատար 1 հատ

Ընդհանուր քանակը 21 միավոր

3.<<ԲԿՎ>>-ի աշխատանքների կազմակերպման ամենօրյա առաջնահերթ խնդիրն է եղել տրանսպորտային միջոցների անխափան շահագործումը, իսկ անհրաժեշտության դեպքում ընթացիկ և հիմնական նորոգումների կատարումը, որոնց իրականացման համար 2023թ-ին ծախսերը կազմել է՝ 72 825 160 դրամ, որից՝

1) բնական սեղմված գազ- 49 516 972 դրամ
2) դիզելային վառելիք- 7 916 400 դրամ

3) ավտոյուղ- 4 185 000 դրամ
4) ավտոպահեստամասեր- 8 579 988դրամ
5) մեքենաների ընթացիկ վերանորոգում- 2 626 800 դրամ

4. Ձեռք է բերվել՝

1) կնիք կլոր, դրոշմակնիք պատյանով, պլաստմասե 15 000 դրամ արժողությամբ,

2) աղբամանների ներկման աշխատանքները կազմակերպելու համար էլ. Հեղուկացիր 22 500 դրամ արժողությամբ,

3) ձեռքով գործարկվող մաքրող սարք 396 000 դրամ արժողությամբ,

4) ձեռքով գործարկվող մաքրող սարքի խոզանակ 60 000 դրամ արժողությամբ,

5) աղբահանության վճարի անդորրագրերի գրքույկներ 370 000 դրամ արժողությամբ:

5. Սանիտարական մաքրման և աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար ձեռք է բերվել անհրաժեշտ քանակությամբ՝ տնտեսական ապրանքներ, ձեռնոցներ, փողոցի մաքրման ավելներ և այլ անհրաժեշտ նյութեր 1 768 200 դրամ արժողությամբ:

6. Էջմիածին քաղաքում և Ոսկեհատ բնակավայրում տեղադրված աղբամանների՝ հարակից տարածքների ախտահանման աշխատանքները կազմակերպելու համար ձեռք է բերվել քլորակիր 100 000 դրամ արժողությամբ:

7. Էջմիածին քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար ձեռք է բերվել 14 950 204 դրամ արժողությամբ շինարարական նյութեր:

8. Կատարվել է Էջմիածին քաղաքի Սրբ. Մ. Մաշտոց 69 շենքի 1-ին մուտքի վերանորոգման աշխատանքներ 500 000 դրամարժողությամբ:

9. Կատարվել է տանիքի վերանորոգման և ջրահեռացման խողովակների միացման ծառայության համար ծախսվել է 264 000 դրամ:

10.Վարչության ամենօրյա աշխատանքները կազմակերպելու համար ձեռք է բերվել գրասենյակային ապրանքներ և նյութեր 174 968 դրամ արժողությամբ :

11. Կատարվել է Էջմիածին քաղաքի և Ոսկեհատ բնակավայրի սեփական տների կեղտաջրերի հեռացման, հորերի մաքրման ծառայություն 1 074 000 դրամ արժողությամբ:

12. Կատարվել է բազմաբնակարան շենքերի վթարված կոյուղատարերի և ջրի խողովակների փոխարինման ծառայություն 1 007 000 դրամ արժողությամբ:

13. Ձեռք է բերվել փոստային ծառայություններ՝ ծրարներ և նամականիշեր 269 200 դրամ արժողությամբ:

14. Ձեռք է բերվել պաստառներ՝ տեղադրված աղբամանների, հարակից տարածքներում <<Աղբ չթափել>> տպագրությամբ 50 000 դրամ արժողությամբ:

15. Ձեռք է բերվել աշխատանքային արտահագուստ 615 000 դրամ արժողությամբ:

16. Մեքենաների ապպահովագրական, տեխ. զննման, հարկերի վճարման, գազաբալոնների ստուգաչափման ծախսերը կազմել են 1 287 749 դրամ:

17. Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության>> մեքենաների պահպանության՝ ավտոպարկում շինարարական աշխատանքներ կազմակերպելու համար ձեռք է բերվել շինարարական ապրանքներ 997 030 դրամ արժողությամբ :

18. Սարքերի և սարքավորումների սպասարկման, համակարգչային ծրագրային ծառայության, քարթրիջի լիցքավորման ծառայությունների համար ծախսվել է 288 400 դրամ :

19. Վարչության կարիքների համար շահագործված ամբարձիչի ծառայության համար ծախսվել է 564 000 դրամ:

20.Վարչության ամենօրյա աշխատանքները կազմակերպելու համար ձեռք է բերվել գրասենյակային ապրանքներ և նյութեր 653 800 դրամ արժողությամբ :

21.Կատարվել է ամենօրյա աղբավայրի մաքրման, կուտակված աղբը դեպի հորանցք ԴԶ-170 բուլդուզերով հրման,հարթեցման և հողով ծածկելու գործընթացը:

Տարեվերջին ՀՀ Կառավարության աջակցությամբ հնարավոր եղավ լուծել համայնքի առջև ծառացած աղբահանության խնդիրը.

Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող անհետաձգելի ծրագրով ՀՀ Կառավարությունը աղբատար մեքենաների, ինքնաթափի և աղբարկղերի ձեռքբերման համար Վաղարշապատ համայնքին հատկացրեց 476,100.0 հազար ՀՀ դրամ:

Նշված ծրագրով «Բնակարանային կոմունալ վարչության» ավտոպարկը համալրվեց 7 աղբատար, 1 ինքնաթափ մեքենաներով, և շուրջ 1200 մեծ աղբամանով: Այսպես, ՀՀ Կառավարության միջոցներով, Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ և համայնքապետարանի երկարատև ջանքերի արդյունքում 2024 թվականին հիմնովին կլուծվի մեր համայնքի առաջ ծառացած գլխավոր խնդիրներից մեկը:
Այս ներդրմամբ ամբողջությամբ կփոփոխվի աղբահանության աշխատանքների կատարման համակարգը, որակը և ժամանակացույցը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ ԲԱԺՆԻ

2023 թվականին Վաղարշապատի համայնքապետարանի Կրթության և մշակույթի բաժնի ենթակայությամբ գործող ինը մանկապարտեզում տարվա ընթացքում գործել է 50 խումբ: Դեկտեմբեր ամսվա տվյալներով մանկապարտեզ է հաճախել 1235 նախադպրոցական տարիքի երեխա: Օգոստոսին կազմակերպվել է ավագ խմբերի երեխաների՝ թվով 343 սանի ավարտական գործընթացը: Երեխաներին համայնքապետարանի կողմից նվիրվել են գրատախտակներ՝ գունավոր մարկերով, մետաղական տառերով:

Մանկապարտեզները մաքրող միջոցներ, հիգիենայի պարագաներ և գրենական պիտույքներ են ստացել համայնքապետարանի կողմից: Տարվա ընթացքում ջեռուցման կամ սննդի մատակարարման խափանման դեպքեր չեն գրանցվել: Բաժնի աշխատակիցների կողմից

մշտապես հսկողություն է իրականացվել սննդի պահպանման և բաշխման, հիգիենայի կանոնների կիրառման, մեթոդական և ընթացիկ աշխատանքների կատարման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ մանկապարտեզ է հաճախող երեխաներից 83–ը օգտվել են վարձավճարի զեղչման արտոնությունից:

Ամանորին ընդառաջ համայնքապետարանի կողմից բոլոր խմբերի երեխաներին տրվել են նվերներ: Բոլոր մանկապարտեզները համալրվել են նոր խաղալիքներով, զարգացող և ճանաչողական խաղերով:

Ուսուցչի տոնին և ամանորյա տոներին ընդառաջ մանկապարտեզների բոլոր աշխատակիցները արժանացել են դրամական պարգևատրման: Ն/դ հաստատությունների դաստիարակները մասնակցել են պետական ֆինանսավորմամբ պարտադիր վերապատրաստումների, իսկ բուժքույրերը համայնքի միջոցներով մասնակցել են ՇՄՋ կրեդիտավորմանն ու ապահովել պահանջվող 140 կրեդիտը:

Բաժնի աշխատակիցների անմիջական մասնակցությամբ և աջակցությամբ իրականացվել է «Փոքրիկ քայլ» հանրապետական մանկապատանեկան երաժշտական մրցույթ-փառատոնը, որին մասնակցել է ՀՀ տարբեր մարզերի և Արցախի ավելի քան 2000 պատանիներ: Երևանի տարբեր թատրոնների հետ ակտիվ համագործակցությունների արդյունքում Կոմիտասի անվան մշակույթի պալատում ցուցադրվել են հայտնի ներկայացումներ: Համաձայն Վաղարշապատի համայնքի ավագանու 22.11.2023 թ. -ի թիվ 87-Լ որոշման՝ Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզ ՀՈԱԿ–ները անվանափոխվել են:

ԹԻՎ 1 «ՀԱՍՄԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 4 խմբով և ունի 122 սան:

Վաղարշապատի թիվ 1 «Համիկ » մանակապարտեզ ՀՈԱԿ-ը գործել է 4 խմբով, ունեցել է 122 սան: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ: Մայիս ամսին տեղի է ունեցել ավարտական ցերեկույթ,երեխաները ստացել

են ավարտական վկայականներ և գրատախտակներ:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 1 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Քրիստինե Կոջոյանը: Դեկտեմբերի 22-ին տեղի է ունեցել ամանորյա ցերեկույթ «Ամանորյա երազանքներ» խորագրով ,որին բոլոր տարիքային խմբերի երեխաներին տրվել են նվ

ԹԻՎ 2 «ՇՈՒՇԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 6 խմբով և ունի 205սան:

Վաղարշապատի թիվ 2 «Շուշան»մանակապարտեզ ՀՈԱԿ-ը գործել է 6 խմբով, ունեցել է 205 սան: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ: Փետրվարի 20- ին ավագ խմբի սաներն այցելել են Վաղարշապատի Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարան ՀՈԱԿ, որտեղ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը երեխաների համար ընթերցել է հեքիաթ:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 3 երեխա:Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Մետաքսյա Պատուրյանը և Հայկանուշ Ներսիսյանը:Դեկտեմբերի 14-ին տեղի է ունեցել ամանորյա ցերեկույթ «Ամանորյա կրկես» խորագրով ,որին բոլոր տարիքային խմբերի երեխաներին տրվել են նվերներ:

ԹԻՎ 3 «ԾԻԾԵՌՆԱԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 10 խմբով և ունի 292 սան:

Վաղարշապատի թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանակապարտեզ ՀՈԱԿ-ը գործել է 10 խմբով, ունեցել է 292 սան :Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ:Մայիս ամսին տեղի է ունեցել ավարտական ցերեկույթ,երեխաները ստացել են ավարտական վկայականներ և գրատախտակներ: 2023 թ. հուլիս ամսից մանկապարտեզն ընդգրկվել է ԿԶՆԱԿ փորձարարական ծրագրում՝ անցնելով տնօրենի,մեթոդիստի և դաստիարակների վերապատրաստում:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 2 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Արմինե Ավագյանը և Լուսինե Զուռնաչյանը :Դեկտեմբերի 21-ին տեղի է ունեցել ամանորյա ցերեկույթ «Ամանորյա խառնաշփոթ» խորագրով ,որին բոլոր տարիքային խմբերի երեխաներին տրվել են նվերներ:

ԹԻՎ 4 «ՁՆԾԱՂԻԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 6 խմբով ,96 սան

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսու-մանկապարտեզ ՀՈԱԿ –ը 2023թ. հունվարի 9-ից իր գործունեությունը շարունակել է թիվ 3 «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ –ում:Մանկապարտեզը գործել է 6 խմբով՝ կրտսեր 1-ին,կրտսեր 2-րդ ա,կրտսեր 2-րդ բ,միջին ա,միջին բ,ավագ:Առաջնորդվելով ԿԶՆԱԿ հիմնադրամի փորձարարական ծրագրով՝մանկապարտեզը իր կրթադաստիարակչական գործունեությունը ծավալել է հիմք ընդունելով հիմնադրամի պահանջները:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային

գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 1 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Աննա Պողոսյանը և Լուսինե Սամվելյանը:Դեկտեմբերի 25-ին տեղի է ունեցել ամանորյա ցերեկույթ,որին բոլոր տարիքային խմբերի երեխաներին տրվել են նվերներ:

ԹԻՎ 5 «ԳԱՐՈՒՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 4 խմբով և ունի 134 սան:

Թիվ 5 «Գարուն» մանկապարտեզ է հաճախել 134 երեխա, գործել է 4 խումբ: Ողջ ուսումնական տարին եղել է աշխատանքով հագեցած: Կրթադաստիարակչական աշխատանքները կատարվել են մանկապարտեզի կանոնադրության, պետական չափորոշների և համալիր ծրագրերի համաձայն, որոնք ամրագրվել են հաշվետվություններում, մանկավարժական խորհրդի նիստերում: Հաճախ իրականացվել են մեթոդժամեր, որտեղ քննարկվել և ուսումնասիրվել են ուսումնական խնդիրներ, բարեփոխումները, նորագույն տեխնոլոգիաները ու մեթոդները: Ողջ ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են ուսումնադաստիարակչական, մեթոդական աշխատանքներ, որոնք հսկվել են տնօրենի, մեթոդիստի կողմից: Անցկացվել են քննարկումներ, խորհրդատվություններ ընտրված թեմաների, կազմակերպվող միջոցառումների, էքսկուրսիաներ շուրջ:Սեպտեմբերից սկսած արվել է կրտության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 3 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Հայկանուշ Հակոբյանը:Ամանորյա ցերեկույթին բոլոր տարիքային խմբերին տրամադրվել են զարգացնող և ուսուցողական խաղեր:

ԹԻՎ 6 «ԱՐԵՎԻԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Մանկապարտեզը գործում է 7 խմբով և ունի 150 սան:

Վաղարշապատի թիվ 5 «Արևիկ» մսուր- մանկապարտեզ ՀՈԱԿ հաճախել է 150 սան, գործել է 7 խմբով:Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ:Մայիս ամսին կազմակերպվել է ավարտական ցերեկույթ ավագ խմբերում:Ավագ խմբերի միջև կազմակերպվել և անցկացվել է մրցույթ վիկտորինա «Դպրոցի շեմին» խորագրով:Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Լուսինե Այվազյանը և Հասմիկ Մկրտչյանը:2023թ.-ի սեպտեմբերից մանկապարտեզի շենքը հանձնվել է հիմնավերանորոգման:

ԹԻՎ 7 «ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 4 +1 խմբով և ունի 155 սան:

Թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզը գործում է 4 տարիքային խմբերով՝ կրտսեր 2-րդ, միջին, տարատարիք և ավագ: Մանկապարտեզում գործում է 5 խումբ,որից մեկը ժամանակավոր՝ պայմանավորված թիվ 6 «Արևիկ» մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքներով: Մանկապարտեզը ունի 155 սան: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ: : 2023թ.ապրիլի 21-ին թիվ 7 «Զվարթնոց» մանկապարտեզը մասնակցեց «Լավագույն մարզական ՆՈՒՀ 2023 » մրցույթին և զբաղեցրեց պատվավոր 1-ին տեղը:Մայիսի 23-ին տեղի ունեցավ ավարտական ցերեկույթ «Հեքիաթ» խորագրով,երեխաները ստացան ավարտական վկայականներ և գրատախտակներ:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 2 երեխա: Նախադպրոցական

ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Էլյա Մաիլյանը:Ամանորյա ցերեկույթին բոլոր տարիքային խմբերին տրամադրվել են զարգացնող և ուսուցողական խաղեր:

ԹԻՎ 8 «ՈՍՏԱՆ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 6 խմբով և ունի 183 սան:

Թիվ 8 «Ոստան» մսուր-մանկապարտեզը գործում է 6 խմբով,ունի 183 սան: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ: Մայիսին տեղի է ունեցել ավարտական ցերեկույթ «Հեքիաթ» խորագրով,երեխաները ստացան ավարտական վկայականներ և գրատախտակներ:Սեպտեմբերից սկսած արվել է կրթության և զարգացման առանջնահատուկ պայմաններ ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 5 երեխա:Պոլսո Հայոց Պատրիարք Տ.Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստյան հիմադրամի կողմից ամբողջովին փոխվել են դահլիճի պատուհանները: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Արփինե Գրիգորյանը և Մարգարիտա Անդրիասյանը:Ամանորյա ցերեկույթին բոլոր տարիքային խմբերին տրամադրվել են զարգացնող և ուսուցողական խաղեր:

ԹԻՎ 10 «ՈՍԿԵՀԱՏ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 2 խմբով և ունի 48 սան:

Վաղարշապատի թիվ 10 «Ոսկեհատ» մանկապարտեզ ՀՈԱԿ –ը վերաբացվել է 2023թ. -ի մայիսի 2-ից:Մանկապարտեզը գործել է երկու խմբով և ունեցել է 48 սան: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվել և իրականացվել են բաց պարապմունքներ և միջոցառումներ: : Սեպտեմբերից սկսած արվել է կրտության և զարգացման առանջնահատուկ պայմաններ

ունեցող երեխաների առաջնային գնահատում,ներկայացվել Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կողմից գնահատման,ինչի արդյունքում մանկապարտեզում գնահատվել է թվով 1 երեխա: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստմանը մասնակցել է Անժելա Ղուկասյանը:Ամանորյա ցերեկույթին բոլոր տարիքային խմբերին տրամադրվել են զարգացնող և ուսուցողական խաղեր:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1-ԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

2023 թ. սեպտեմբերին դպրոցն ունեցել է 369 աշակերտ որից 46-ը օգտվել են վարձավճարների գծով արտոնությունից:

Վարձի ամբողջական փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը՝ 2

50 տոկոս վարձի փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը – 44:

Դպրոցում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները՝

Հունվարի 30-ին՝ համերգ՝ նվիրված Հայոց բանակի օրվան:

Մարտի 6-ին՝ «Տոնդ շնորհավոր մայրիկ»՝ համերգ նվիրված կանանց միջազգային օրվան:

Մարտի 16-ին՝ «Երախտիք ուսուցչին» խորագրով համերգ՝ նվիրված դպրոցի բազմավաստակ, վաստակած հանգստի գնացած ուսուցիչների համար:

Մարտի 20-ին համերգ՝ նվիրված Հայաստանում Ֆրանկոֆոնիայի օրերին:

Ապրիլի 25-ին համերգ՝ նվիրված Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Մայիսի 30-ին՝ դպրոցի տարեվերջյան հաշվետու համերգ:

Դպրոցի կարիքների համար համայնքապետարանից պարբերաբար տրամադրվել են մաքրող և հակահիգիենիկ միջոցներ, պարբերաբար կազմակերպվել են շաբաթօրյալներ՝ դպրոցի և հարակից տարածքի մաքրման նպատակով: Դպրոցի սաներն ակտիվ մասնակցել են համայնքային բոլոր միջոցառումներին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

Դպրոցում 2023թ.-ի սեպտեմբերին սովորել է 211:

Վարձի ամբողջական փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը-14:

50 տոկոս վարձի փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը – 16:

Դպրոցում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

Դպրոցի հիմնադրման 45-ամյակին նվիրված համերգ

Առաջին դասարանում սովորող աշակերտների համերգ

Հանդիպում ՀՀ Վաստակավոր արտիստ Ռոբերտ Ամիրխանյանի հետ

Համերգ՝ ըստ մասնագիտական բաժինների

Տարեկան հաշվետու համերգ

Ավարտական վկայականների հանձնում

Այցելություն Ալ. Սպենդիարյանի տուն-թանգարան և Երևանի պետական կոնսերվատորիա- սեպտեմբեր

Նոր ընդուված մանկավարժական կազմի համերգ

Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի կողմից իրականացված մեթոդական վարպետության դասեր նոյեմբեր

Մանկավարժների բաց դասեր

Դիզակ արտ ՄԵ կենտրոնի սաների թատերական ներկայացում

Մշակութային փոխգործակցության ծրագիր Ե. Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոցի հետ

Ավարտական դասարանների տղա աշակերտների այցելություն զորամաս

Ամանորյա համերգ աշակերտների մասնակցությամբ

Դպրոցում կատատարվել են նաև հետևյալ շին. աշխատանքները՝

Փոխվել է վթարային ելքի տանիքը, վերանորոգվել է ուսուցչանոցի կահույքը, դպրոցը համալրվել է գրատախտակներով, տպիչ սարքով, գրասեղանով, փոխվել է դպրոցի ցուցանակը:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ

Պատմազգագրական թանգարանում տարվա ընթացքում այցելել է մոտ 3000 այցելու: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ ցուցադրություններ, հիշատի օրեր, ցուցահանդեսներ:

Թանգարանի ցուցափեղկերը լուսավորվել են նոր լամպերով, թանգարանը պարբերաբար համալրվել է մաքրով միջոցներով և տնտեսական պարագաներով:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ

2023 թվականի ընթացքում թանգարան է այցելել մոտ 3000 այցելու՝ այդ թվում նաև զբոսաշրջիկներ: Թանգարանում կազմակերպվել են տարաբնույթ մշակութային միջոցառումներ, ցուցադրություններ, հիշատակի օրեր: Թանգարանն ակտիվ համագործակցել է հանրակրթական տարբեր ուսումնական հաստատությունների հետ՝ իրականացնելով կրթական ծրագրեր, նախագծային աշխատանքներ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎ. ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ

2023 թ. սեպտեմբերին դպրոցն ունեցել է 288 սան, որից արտոնությունից օգտվել է 25 երեխա՝ Վարձի ամբողջական փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը-2:

50 տոկոս վարձի փոխհատուցմամբ սովորող աշակերտների թիվը – 23:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀՈԱԿ

Հաշվետու ժամանակաշրջանում գրադարանը համալրվել է 2955 միավոր գրականությամբ ստացված բյուջետային միջոցների հաշվին և նվիրատվության կարգով /բյուջետային միջոցների հաշվին -78 միավոր, նվիրատվություն – 2878 միավոր: Ընթերցողների քանակը՝ 5474, ընթերցողական հաճախումների քանակը՝ 44820, գրքատացքը՝ 74887 միավոր: Գրքային ֆոնդը՝ 284147 միավոր:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀՈԱԿ 2023թ

«Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները՝

1. 17 Հունվար Էջմիածին վոկալ –գործիքային էստրադային համույթի համերգ
2. 21 Հունվար «Փոքրիկ զորավարը» ֆիլմի ցուցադրություն
3. 28 Հունվար- Հայոց բանակի կազմավորման 31- ամյակին նվիրված միջոցառում
4. 13 Փետրվար- Տեառնընդառաջին նվիրված միջոցառում
5. 5 Մարտ Կամերային թատրոն «Տղաները չափն անցնում են» ներկայացում
6. 12 Մարտ «Փոքրիկ զորավարը 2» ֆիլմի ցուցադրություն

7. 18 Մարտ Լևոն Ավետիսյանի հիշատակին նվիրված հուշ-երեկո

8. 19 Մարտ «Բուրատինո» մանկական ներկայացում

9. 21 Մարտ Եվրոպական ժառանգության օրեր «Երկու հանճար՝ Կոմիտաս և Դեբյուսի»

10. 1 Ապրիլ «Սկայ Արտ» պարային փառատոն

11. 2 Ապրիլ «Դհոլահարների համույթ» համերգ

12. 6 Ապրիլ Կայարան թատրոն «Անահիտ» մանկական երաժշտական ներկայացում

13. 8 Ապրիլ «Մայրության տոնին նվիրված» համերգ

14. 16 Ապրիլ «Վաղարշապատ համայնքապետի ղեկավարի գավաթ» սպորտային պարերի բաց առաջնություն

15. 22 Ապրիլ «Հայ- վրացական 7-րդ փառատոն»

16. 30 Ապրիլ Ջազի միջազգային օրվան նվիրված ջազ համերգ

17. 30 Ապրիլ Պարի միջազգային օրվան նվիրված համերգ

18. 7 Մայիս Մայիսյան տոներին նվիրված համերգ

19. 10 Մայիս Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ «Չարենց» երաժշտաթատերական ներկայացում

20. 18 Մայիս «Հայկն ու դասագիրքը» ներկայացում

21. 19 Մայիս Արցախյան պատերազմին նվիրված հուշ երեկո

22. 22 Մայիս «Սիլվա Հակոբյան» մենահամերգ

23. 28 Մայիս Ջազզ համերգ նվիրված 1-ին հանրապետության տոնին

24. 30 մայիս «Էջմիածին պարարվեստի կենտրոնի սաները և սաների սաները» պարային միջոցառում

25.6 Հունիս Արամ Խաչատրյան 120 բացօթյա ֆիլմի դիտում

26. 9 Հունիս «Կողք կողքի» ներառական համերգ

27. 14 Հունիս Վաղարշապատ ժող. գործիքների նվագախմբի համերգ նախասրահում

28. 25 Հունիս Մոսկվայի «Վերածնունդ» երգչախմբի համերգ

29. 28 Հունիս Հովհաննես Դավթյան ստենդ-ափ

30. 1 Հուլիս «Օրդակյան պարի դպրոց» պարային միջոցառում

31. 9 Հուլիս «Նուրի» և «Վաղարշապատ» պարախմբերի միացյալ համերգ

32. 18 Հուլիս «Փոքրիկ քայլ» գալա համերգ

33. 20 Հուլիս «Այգեկ» արվեստ դպրոցի հաշվետու համերգ

34. 30 Հուլիս «Ռոբ սթայլ» պարախմբի բաց դաս

35. 26 Օգոստոս Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում «Ազգային պարն ու երաժշտությունը՝ որպես կենսունակ ժառանգության անբաժան մաս» նվագախմբի և պարախմբի համատեղ ելույթ

36.14 Հոկտեմբեր Ուսուցիչների տոնին նվիրված համերգային ծրագիր

37. 22 Հոկտեմբեր «Հզոր Հայաստան» համերգային ծրագիր

38. 24 Հոկտեմբեր «Չեբուրաշկա»

39. 27 Հոկտեմբեր «Օլիմպիկոս» լիամետրաժ մուլտֆիլմի ցուցադրություն

40. 3 Նոյեմբեր Կամերային թատրոն «Սիրո խոստովանություն» ներկայացում

41. 7 Նոյեմբեր «Սևազգեստ կանայք» ֆիլմի ցուցադրություն

42.11 նոյեմբեր «Միհրան Ծառուկյան», «Արփի Գաբրիելյան» համերգ

43.15 նոյեմբեր Կրկեսային շոու ծրագիր

44. 18 նոյեմբեր «Հայրենի մշակույթ» համահայկական փառատոն

45. 30 նոյեմբեր «Ժողովրդական նվագարանների անսամբլների 4-րդ մրցույթ փառատոնի մրցանակաբաշխություն, գալա համերգ»

46. 8 դեկտեմբեր «Իտալական ռոմանսների երեկո» համերգ

47. 9 դեկտեմբեր «Ամեն գող գող չէ» ներկայացում

48. 10 դեկտեմբեր «Սպիտակաձյունիկի արկածները» մանկական ներկայացում

49. 15 դեկտեմբեր Կոմիտասի անվան մշակույթի պալատում գործող պետական խմբերի տարեվերջյան հաշվետու համերգ

50. 16 դեկտեմբեր «M Dance» պարախմբի համերգ

51. 20 դեկտեմբեր «Փալանչո» մանկապատանեկան տիկնիկային թատերախմբի ներկայացում արցախցի փոքրիկների համար

52.23 Դեկտեմբեր Բարեգործական մյուզիքլ «Բարին է հաղթում»

53. 26 Դեկտեմբեր «Վերածնունդ» պարային ներկայացում

54. 29 դեկտեմբեր Աբովյանի դրամատիկական թատրոն «Լապլիդոյի բնակիչները» ամանորյա ներկայացում

«Էջմիածին պարարվեստի կենտրոն»

Սաների թիվը՝ 32, որից

Տղա՝ 14

Աղջիկ՝ 18

Փառատոններ և մրցույթներ

- ՀՀ ժողովրդական արտիստ Ազատ Ղարիբյանի 100 ամյակին նվիրված փառատոն
- «Թռիչք» հանրապետական մրցույթ փառատոն
- «Կանչ» կատարողական արվեստի հանրապետական մրցույթ փառատոն
- «Պարահունչ N2» պարային նախագիծ

«Վաղարշապատ» ազգային նվագարանների նվագախումբ

Սաների թիվը՝ 20

- Համերգ Խաչքարերի պուրակում
- Մենահամերգ
- «Փոքրիկ քայլ» մրցույթ փառատոն
- Համերգ Արմավիրի մարզում
- Տարեվերջյան հաշվետու համերգ

2023թ-ին «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում վերանորոգվել է սպասասրահը, կատարվել են ընթացիկ բարեկարգման աշխատանքներ, նվիրատվության միջոցով շենքում տեղադրվել է տեսանկարահանման և տեսաձայնագրման համակարգ,ձեռք է բերվել նոր գույք: